Հաստատված է
Տնօրինության 21.01.2025 թիվ
DEC 12-06 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում 27.01.2025-ից:

Սահմանամերձ և առանձին բնակավայրերում բնակելի տան կառուցապատում

Վարկի նպատակը	Սահմանամերձ և առանձին գյուղական բնակավայրերում անհատական բնակելի տուն կառուցելու / կառուցապատումը շարունակելու նպատակով
Վարկառուի/համավարկառու	18-65 տարեկան ֆիզիկական անձինք:
Շահառու	- քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցված ամուսնության մեջ գտնվող, առնվազն մեկ անչափահաս երեխա*** և ՀՀ քաղաքացիություն ունեցող ամուսիններ, կամ - քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցված ամուսնության մեջ գտնվող, անչափահաս երեխա*** չունեցող և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող ամուսիններ, որոնց տարիքների հանրագումարը չի գերազանցում 75-ը (ներառյալ), կամ -առնվազն մեկ անչափահաս երեխա*** և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող միայնակ ծնող՝ այրի **Առանձին բնակավայրերի դեպքում՝** - քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցված ամուսնության մեջ գտնվող, առնվազն մեկ՝ 13 տարին չլրացած երեխա*** և ՀՀ քաղաքացիություն ունեցող ամուսիններ, որոնք ծրագրին դիմելու օրվա դրությամբ նախորդ 1 տարվա ընթացքում հաշվառված չեն եղել Երևան քաղաքում, - քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցված ամուսնության մեջ գտնվող, առնվազն մեկ՝ 13 տարին չլրացած երեխա*** և ՀՀ քաղաքացիություն ունեցող ամուսններ, որոնցից առնվազն մեկն ուսուցչի պահանջները բավարարող անձ է: *Վարկային հայտի հաստատումից հետո վարկի տրամադրումը իրականացվում է բացառապես դիմողին Միասնական Սոցիալական Ծառայության կողմից շահառուի կարգավիճակ շնորհվելուց հետո:*
Վարկի արժույթ	ՀՀ դրամ
Վարկի ժամկետ	120 ամիս
Վարկի գումար	1,000,000-16,000,000 ՀՀ դրամ Տավուշի մարզի Բաղանիս, Բերքաբեր, Կիրանց և Ոսկեպար բնակավայրերի դեպքում վարկի առավելագույն գումարը կազմում է 21,000,000 ՀՀ դրամ
Տարեկան անվանական տոկոսադրույք (հաստատուն)	13%
Տարեկան փաստացի տոկոսադրույք	13,92% հաշվարկում ներառված չէ սուբսիդավորվող գումարները
Աջակցության չափ	
Մայր գումարի մարման համար	Ամսական մինչև 277,000 ՀՀ դրամ, բայց ոչ ավել, քան հանրագումարային 16,000,000 ՀՀ դրամ
Տոկոսագումարի մարման համար	Ամսական մինչև 203,000 ՀՀ դրամ, բայց ոչ ավել քան հանրագումարային 12,668,000 ՀՀ դրամ

Հաստատված է
Տնօրինության 21.01.2025 թիվ
DEC 12-06 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում 27.01.2025-ից:

Տավուշի մարզի Բաղանիս, Բերքաբեր, Կիրանց և Ոսկեպար բնակավայրերի դեպքում վարկի մայր գումարի մարման համար	Ամսական մինչև 366,000 ՀՀ դրամ, բայց ոչ ավել, քան հանրագումարային 21,000,000 ՀՀ դրամ
Տավուշի մարզի Բաղանիս, Բերքաբեր, Կիրանց և Ոսկեպար բնակավայրերի դեպքում վարկի տոկոսագումարի մարման համար	Ամսական մինչև 266,000 ՀՀ դրամ, բայց ոչ ավել քան հանրագումարային 16,626,000 ՀՀ դրամ
Աջակցության ամսական սահմանաչափերը (մայր գումարի և տոկոսագումարների) չեն կիրառվում ժամանակացույցով նախատեսված առաջին ամսվա վճարների նկատմամբ:	
Մարման եղանակը	Անուիտետ (մայր գումարի և տոկոսագումարի ամենամսյա հավասարաչափ վճարում)
Վարկի տրամադրման եղանակ	Անկանխիկ՝ փուլային եղանակով****, Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ փուլը տրամադրման հիմք է հանդիսանում նախորդ փուլում տրամադրված վարկի գումարի նպատակային օգտագործումը:
Վարկի տրամադրման միջնորդավճար	Առկա չէ
Վարկի սպասարկման ամսական վճար	Առկա չէ
Վարկի վաղաժամկետ մարման տույժ	Առկա չէ
Ապահովագրություն	Առկա չէ
Ժամկետանց մայր գումարի տույժ	0,1% օրական
Ժամկետանց տոկոսագումարի տույժ	0,13% օրական
Ապահովվածություն	Կառուցապատման ենթակա հողատարածք կամ կիսակառույց** Անհրաժեշտության դեպքում այլ անշարժ գույք
Վարկ/գրավ հարաբերակցություն	Չի կիրառվում
Գրավի գնահատում	Բանկի հետ համագործակցող անկախ գնահատողի կողմից
Այլ դրույթներ	**Հիփոթեքային վարկի աջակցությունը դադարում է հետևյալ դեպքերում՝** - վարկի ամբողջական մարման դեպքում: - վարկի գործողության ընթացքում գույքի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձանց անունով գրանցելու դեպքում(անկախ բաժնեմասից): - գործողության ընթացքում տվյալ վարկի գծով 90 օրվանից ավելի ժամկետանց պարտավորությունների առկայության դեպքում: - պետության կողմից կատարված ամենամսյա մարումների հանրագումարային արժեքի սահմանված չափը լրանալու դեպքում: **Տրամադրված վարկի գումարը շահառուի կողմից փոխհամաձայնեցված եղանակով կամ դատական կարգով ենթակա են վերադարձման պետությանը՝** - վարկի ընթացքում շահառուի(վարկառուի) մահվան դեպքում, եթե շահառուի ժառանգը շահառուի ամուսինը կամ երեխան չէ: - վարկի գումարը օգտագործվել է ոչ նպատակային: - վարկի տրամադրումից հետո 3 տարվա ընթացքում շահառուի կողմից կառուցված գույքի նկատմամբ ավարտական ակտը չի ներկայացվել:

Հաստատված է
Տնօրինության 21.01.2025 թիվ
DEC 12-06 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում 27.01.2025-ից:

Սույն սակագների շրջանակներում տրամադրվող ծառայություններից օգտվելու նպատակով վարկառուն՝ ստորև նշված երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարում է հետևյալ չափով	- սահմանափակումների վերաբերյալ տեղեկանք՝ 10,000 ՀՀ դրամ, -իրավունքի պետական գրանցման վճար՝ 26,000–53,000 ՀՀ դրամ, -նոտարական վավերացման վճար՝ 12,000-30,000 ՀՀ դրամ, գրավադրվող գույքի գնահատման վճար՝ 15,000-25,000 ՀՀ դրամ: Անկախ սույն պայմաններում նշված 3-րդ անձանց վճարների դրույքաչափերից, վերջիններիս կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարները կարող են փոփոխվել:
Երաշխավորություն	Ֆիզիկական անձի/Իրավաբանական անձի (Վարկը հաստատող լիազոր մարմնի որոշմամբ)
Վարկառուի/համավարկառուի/գրավատուի նկատմամբ վարկային պատմության պահանջները	Վարկի տրամադրման պահին գործող վարկերը և այլ անձանց պարտավորությունների դիմաց տրամադրված երաշխավորությունները չպետք է լինեն ժամկետանց կամ դասակարգված որպես հսկվող կամ ավելի խիստ դասերով:
Գրավատուի նկատմամբ պահանջ	Կառուցապատվող անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցվում է շահառուների անվանք:
Կառուցված գույքի ավարտական ակտի ներկայացման առավելագույն ժամկետ	Վարկի տրամադրումից հետո 36 ամսվա ընթացքում, բայց ոչ ուշ քան վերջին փուլի տրամադրումը

** Բնակավայրերի ցանկը սահմանված է «հավելված 1»-ով*

***կառուցապատումը շարունակելու նպատակով հիփոթեքային վարկերը կարող են տրամադրվել, եթե կիսակառույցի շինության նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի «Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ» բաժնում ավարտվածության աստիճանը մինչև 80% է կամ նշված է անավարտ կամ կիսակառույց:*

**** Անչափահաս երեխա(ներ) ուեցող ծնողը հանդիսանում է շահառու, եթե երեխան(երը) ունի ՀՀ քաղաքացիություն Ընդ որում, եթե երեխայ(ներ)ի ծննդի պետական գրանցումն իրականացվել է օտարերկրյա պետությունում, ապա ծնողը հանդիսանում է շահառու, եթե երեխային(ներին) տրվել է ՀՀ քաղաքացու անձնագիր:*

***** Առնվազն 4 փուլով, ընդ որում վերջին փուլը տրամադրվելու է կառուցվող բնակելի տան ավարտական սեփականության վկայականի գրանցման դեպքում /չհրապարակվող/*

! Սույն պայմաններով չկարգավորվող դեպքերը և ծրագրի ժամկետները կարգավորվում են ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 9-ի թիվ 842-Լ և 2022 թվականի հոկտեմբերի 6-ի 1562-Լ որոշումներով

Ծանոթություն

Նախքան պայմանագրի կնքումը Բանկը Ձեզ կտրամադրի վարկի էական պայմանների անհատական թերթիկը, որում ներկայացված են Ձեզ տրամադրվելիք վարկի էական պայմանները Հաճախորդին տրամադրվում է պայմանագրի առաջարկը յոթ օր առաջ և տրամադրվում է նաև յոթ օր մտածելու ժամանակ:

1.Վարկի տոկոսները հաշվարկվում են վարկի մնացորդի նկատմամբ՝ ելնելով տարում 365 օրվա հաշվարկից:

2.Գրավի և իրավունքի պայմանագրերը ենթակա են նոտարական վավերացման:

3. Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև Բանկի հետ համագործակցող անկախ գնահատողների ցանկը սահմանվում են առանձին Հավելվածներով:

4.Վարկը տրամադրվում է Բանկի Գլխամասային գրասենյակում և Բանկի բոլոր մասնաճյուղերում բացառությամբ «Զվարթնոց» և «Տիգրան Մեծ» մասնաճյուղերի:

5. Վարկի տրամադրման դրական որոշման կայացման գործոններն են. Վարկային հայտի համապատասխանությունը սույն փաստաթղթով սահմանված պահանջներին:

6. Վարկի մերժման գործոններն են՝ ՀՀ կառավարության ՀՀ Սահմանամերձ բնակավայրում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության ծրագրի պայմաններին չբավարարելը, հաճախորդի վատ վարկային պատմությունը, անհրաժեշտ ապահովվածության անբավարարությունը/բացակայությունը:

7. Պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացում 3 աշխատանքային օրվա ընթացքում և տրամադրում՝ մինչև 15 աշխատանքային օր:

8.Վարկի մարման նպատակով մուտքագրված ցանկացած գումար որպես կանոն Բանկի կողմից ուղղվում է մուտքագրման պահին առկա՝ Հաճախորդի կողմից Բանկին Վարկային պայմանագրի ուժով վճարման ենթակա գումարների, այդ թվում՝ տույժերի, տոկոսների, Վարկի գումարի մարմանը: Բանկն իրավունք ունի Հաճախորդի հետ կնքվող պայմանագրում վճարման ենթակա գումարների այլ հերթականություն սահմանել:

9.ՀԱՃԱԽՈՐԴԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՈՒՆԵՑԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԿԵՏԻՑ ՇՈՒՏ ՄԱՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ: ՎԱՐԿԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ՄԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՄԱՄԱՍՆՈՐԵՆ ՆՎԱՋԵՑՎՈՒՄ ԵՆ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՆԱԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ:

10.Երաշխավորն իրավունք ունի.
- Ցանկացած ժամանակ վարկատուից պահանջել տեղեկատվություն վարկի մնացորդի չափի մասին:
- Վարկառուից հետ ստանալու իր կողմից վարկի համար վճարած գումարները, ինչպես նաև վարկառուի փոխարեն կրած այլ վնասները:
- Քաղվածքների, դրանց կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանները, ժամկետները և սակագները համաձայն բանկում գործող Ոչ ֆինանսական ծառայությունների սակագների:

11. Քաղվածքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների և այլ ծառայությունների տրամադրման պայմանները և սակագները հրապարակված են Բանկի պաշտոնական կայքում՝ www.fastbank.am, ինչպես նաև տեղադրված են Բանկի գործունեության վայրերում:

12.Վարկային պարտավորությունները վարկառուի կողմից չկատարվելու դեպքում Բանկն իրավունք ունի երաշխավորից պահանջել կատարելու վարկային պարտավորությունները, ինչպես նաև չկատարման հետևանքով վատանալու է երաշխավորի վարկային պատմությունը և հնարավոր է վերջինս զրկվի իր սեփական գույքից:

Հաստատված է
Տնօրինության 21.01.2025 թիվ
DEC 12-06 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում 27.01.2025-ից:

13.ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ:

ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ԳՐԱՎ ԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ ՊԱԿԱՍ Է ԳՐԱՎՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ՊԱՀԱՆՋԻ ԵՎ ԳՐԱՎ ԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԻՑ, ԱՊԱ ՎԱՐԿԱՏՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՊԱԿԱՍ ԳՈՒՄԱՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԱՅԼ ԳՈՒՅՔԻՑ:

14.ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿԸ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵԶ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:

15. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՏԵՂԱԴՐՎԱԾ Է ԲԱՆԿԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔՈՒՄ www.fastbank.am:

16. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ԲԱՆԿԻ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՍՏՈՎ, ԿԱՄ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՅԼ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ և ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ԳՐԱՎՈՐ ԴԻՄԵԼ ԲԱՆԿԻՆ ՁԵՐ ԵՎ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑԸ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՈՉ ԱՎԵԼԻ, ՔԱՆ ՏԱՐԻՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ, ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԿԿԻՐԱՌՎԻ ՁԵՐ ԴԻՄՈՒՄԸ ՍՏԱՆԱԼՈՒՑ 30 ՕՐ ՀԵՏՈ:

17. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է:

18. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԿՐԵԴԻՏԱՌՈՒՆ ԿԱՐՈՂ Է ԶՐԿՎԵԼ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ, ԵԹԵ ՉԿԱՏԱՐԻ ԿԱՄ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԱՏԱՐԻ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍՏԱՆՁՆԱԾ ԻՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

FB_Internal